# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ԱՀ-ԳՀԾՁԲ-20/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող

Հանձնաժողովի բացման և գնահատման նիստի

ք. Մարալիկ 30.03.2020թ. ժամը 10:00

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝** Ն. Նիկոյան

**Հանձնաժողովի անդամներ՝** Հ. Ալեքյան, Լ. Վարժապետյան, Ս. Յուզբաշյան, Մ. Մարտիրոսյան

**Հանձնաժողովի քարտուղար՝** Շ. Բոթոյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(զեկուցող՝ Ն. Նիկոյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:
3. Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:
4. Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:
5. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:
6. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
7. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:
8. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
9. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հաստատում:
10. Անգործության ժամկետի սահմանում:
11. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:

(զեկուցող՝ Ն. Նիկոյան)

1. Ընդունել ի գիտություն, որ

Սահմանված ժամկետում գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| N | Մասնակցի անվանումը | հասցե | Էլ. փոստի հասցե |
|---|---|---|---|
| 1 | <<ԳԼՈԲԱԼ ՊՐՈԵԿՏ>> ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Գլենդել Հիլզ թղմ., Արգիշտիի փող., 7/6 շենք, տարածք 186<br>ՀՎՀՀ 03024399 | globalllc@mail.ru |
| 2 | <<ԷՅՋԻԹԻ ՓՐՈՋԵՔԹ>> ՍՊԸ | ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Շինարարների փողոց 70<br>ՀՎՀՀ 03024399 | agtproject2019@mail.ru |

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

3. Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:

(զեկուցող՝ Ն. Նիկոյան)

Հրավերի պահանջներին համապատասխան հայտ կազմել և ներկայացրել է հետևյալ մասնակիցները՝ <<ԷՅՋԻԹԻ ՓՐՈՋԵՔԹ>> ՍՊԸ, <<ԳԼՈԲԱԼ ՊՐՈԵԿՏ>> ՍՊԸ-ները:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

<u>4.Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:</u>

<u>(զեկուցող՝</u> Ն. Նիկոյան)

<<ԷՅՋԻԹԻ ՓՐՈՋԵՔԹ>> ՍՊԸ, <<ԳԼՈԲԱԼ ՊՐՈԵԿՏ>> ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերը պարունակում են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

<u>5.Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:</u>

<u>(զեկուցող՝</u> Ն. Նիկոյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 4-րդ ենթակետը գնահատող հանձնաժողովը բավարար է գնահատում <<ԷՅՋԻԹԻ ՓՐՈՋԵՔԹ>> ՍՊԸ, <<ԳԼՈԲԱԼ ՊՐՈԵԿՏ>> ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերը:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

<u>6.Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:</u>

<u>(զեկուցող՝</u> Ն. Նիկոյան)

1.Ընդունել ի գիտություն, որ.

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կարիքների համար՝ «Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատման» աշխատանքների ձեռքբերումը: Պայմանագիրը կատարելու համար մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| Չ/Հ | Անվանում | Նախահաշվային գին ըստ գնումների պլանի | Մասնակիցներ | Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ | Ընդհանուր |
| 1 | «Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատման» աշխատանքների ձեռքբերումը/ ճանապարհային տրանսպորտ | 3 000 000 | - | - | - | - | - |
| 2 | «Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատման» աշխատանքների ձեռքբերումը/ լուսավորության ցանց | 3 000 000 | <<ԳԼՈԲԱԼ ՊՐՈԵԿՏ>> ՍՊԸ | 1 289 000 | 401 000 | - | 1 690 000 |
| | | | <<ԷՅՋԻԹԻ ՓՐՈՋԵՔԹ>> ՍՊԸ | 2 000 000 | 480 000 | - | 2 480 000 |

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան տառային և թվային տարբերակների միջև անհամապատասխանություն:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 32-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց ԱԱՀ-ի գումարի հաշվարկման:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7.Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:

(զեկուցող՝ Ն. Նիկոյան)

1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<ԳԼՈԲԱԼ ՊՐՈԵԿՏ>> ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից նախապատվություն տալու սկզբունքով,

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

(զեկուցող՝ Ն. Նիկոյան)

Հայտերի վերաբերյալ ստացվել են հարցումներ, որոնց տրվել են պատասխաններ:

**Հարցում**

խնդրում ենք ներկայացնել ԱՀ-ԳՀԾՁԲ-20/04 ծածկագրով մրցույթի տեխնիկական պայմանները առաջի և երկրորդ չափաբաժինների համար ըստ ՀՕ-21-Ն-Օրենքի 13.Հոդվածի .

1 չափաբաժնի համար. տեղեկություններ ինչքան մակերես, քմ,երկարություն պետք է ասֆալտապատվի, կամ փոսալցվի, փողոցների անունները և քանակը, մայթեր ներառված են թե ոչ և այլն:

2 չափաբաժնի համար , ինչ լուսավորություն է եթե փողոցի , ապա քանի փողոցի լուսավորությունա, քանի հենասյուն պետքա տեղադրվի և այլն, լամպերի հզորությունները և այլն:

**Պարզաբանում**

1 չափաբաժին - Լանջիկ,Իսահակյան,Սարակապ, Ջրափի բնակավայրերի կենտրոնական մուտքի և Մարալիկ բնակավայրի Մաղաթյան և Չերժինսկի փողոցները պետք է ասֆալտապատվեն, իսկ ճանապարհների որոշ հատվածներ նաև պետք է փոսալցվեն:

**Ջրափի բնակավայր՝**

Փողոցի հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ Ջրափի փողոց 1

Չափերը – 5 x 200=1000 քառ.մ, 200 մետր

Առկա է գազատար,ջրատար,մայթեր կապի և հաղորդակցության գծեր,գիշերային լուսավորության հենասյուններ

**Լանջիկ բնակավայր**

Փողոցի հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ Լանջիկ փողոց 1

Չափերը – 5 x 200=1000 քառ.մ, 150 մետր

Առկա է գազատար,ջրատար կապի և հաղորդակցության գծեր,գիշերային լուսավորության հենասյուններ

**Սարակապ բնակավայր**

Փողոցի հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ Սարակապ բնակավյրի կենտրոնական մուտքի փողոց

Չափերը – 5 x 200=1000 քառ.մ, 200 մետր

Առկա է գազատար,ջրատար կապի և հաղորդակցության գծեր,գիշերային լուսավորության հենասյուններ

**Իսահակյան բնակավայր՝**

Փողոցի հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ Իսահակյան փողոց 1

Չափերը – 5 x 200=1000 քառ.մ, 250-300 մետր

Առկա է գազատար,ջրատար,մայթեր

**Քաղաք Մարալիկ՝**

Փողոցի հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ Մարալիկ փողոց Մաղաթյան և փողոց Չերժինսկի

Չափերը – 5 x 200=1000 քառ.մ, 300 մետր

Առկա է գազատար, ջրատար, կապի և հաղորդակցության գծեր, գիշերային լուսավորության հենասյուններ, մայթեր

**Հարցում**

խնդրում ենք ներկայացնել ԱՀ-ԳՀԾՁԲ-20/04 ծածկագրով մրցույթի տեխնիկական պայմանները  առաջի և երկրորդ չափաբաժինների համար ըստ ՀՕ-21-Ն-Օրենքի 13.Հոդվածի .

2 չափաբաժնի համար , ինչ լուսավորություն է եթե փողոցի , ապա քանի փողոցի լուսավորությունև, քանի հենասյուն պետքա տեղադրվի և այլն, լամպերի հզորությունները և այլն:

**Պարզաբանում**

2. 2 չափաբաժին - 11 բնակավայրերում  տեղադրելով  280 հատ 30-50 Վատ հզորության ԼԵԴ  լուստուներ ունենում ենք 8 կմ երկարությամբ ներհամայնքային փողոցներ: Հետագայում նշված ցանցերը պետք է համալրվեն ֆոտովոլտային կայաններով:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

10.  Անգործության ժամկետի սահմանում:

(զեկուցող՝ Ն. Նիկոյան)

“Գնումների մասին” ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում 5օրացուցային օր:

11. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հաստատում:

(զեկուցող՝ Ն. Նիկոյան)

Կազմել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

12. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(զեկուցող՝ Ն. Նիկոյան)

Հաստատել գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման հետևյալ ժամանակացույցը.

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հաստատված պայմանագիրը ներկայացնելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը, ժամը 10:00-ին:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Նիկոյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Վարժապետյան

Հ. Ալեքյան

Ս. Յուզբաշյան

Մ. Մարտիրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Շ. Բոթոյան